

FORPOSTART PRODUCTION-ը և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ՍՊԸ-ն հայտարարում են

2016թ.-ի ապրիլի 7-ին Global Communications ընկերության կողմից ստացված թիվ 322 նամակի համաձայն, Էրոս Ռամագոտտիի՝ ս/թ ապրիլի 26-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսված համերգի տոմսերի ետ վերադարձը և դրանց դիմաց դրամական միջոցների փոխհատուցումը FORPOSTART PRODUCTION-ը պետք է իրականացնի Global Communications ընկերության կողմից սահմանված ժամանակահատվածում՝ ս/թ մայիսի 26-ից հուլիսի 26-ը, վերջինիս կողմից դրամական միջոցները ստանալուց հետո:

Այս պահին Մոսկվայի արբիտրաժային դատարանում ընթանում է դատական վարույթ՝ իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարած Trident Music S.R.L.-ի դեմ՝ որպես Էրոս Ռամագոտտիի պրոդյուսերական ընկերություն, որն անմիջականորեն պատասխանատու է ֆինանսական պարտավորությունների մասով, և RADIORAMA S.R.L.-ի դեմ՝ որպես Էրոս Ռամագոտտիի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք ունեցող ընկերություն, համերգները՝ այդ թվում նաև Երևանում կայանալիք, չեղարկելու արդյունքում պատճառված վնասների հատուցման նպատակով:

Միջոցառման իրացված տոմսերի ետ վերադարձը և դրանց դրամական փոխհատուցումը կիրականացվեն ս/թ մայիսի 26-ից հուլիսի 26-ը ընկած ժամանակահատվածում: Global Communications-ից դրամական միջոցները ստանալուն պես FORPOSTART PRODUCTION-ը կփոխանցի դրանք «Շոուսթար» ՍՊԸ-ին, իսկ վերջինս էլ՝ կենտրոնացված կարգով տոմսերի ետ վերադարձը իրականացնողին:

FORPOSTART PRODUCTION-ը և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ընկերությունը հայտարարում են, որ միջոցառման տոմսերի ետ վերադարձը և դրանց դիմաց դրամական փոխհատուցումը կիրականացվի կենտրոնացված կարգով՝ ս/թ մայիսի 26-ից հուլիսի 26-ը:

Մեր կողմից նախապես կհայտարարվի այն վայրը, որտեղ կենտրոնացված կարգով կիրականացնվի տոմսերի ետ ընդունման և դրամական միջոցների փոխհատուցման գործընթացը՝ վերոնշյալ ժամանակահատվածում՝ ըստ ներկայացված դիմումների:

Եվս մեկ անգամ խնդրում ենք համերգային ծրագրի տոմսեր ձեռք բերած բոլոր անձանց անվնաս և ամբողջական պահպանել տոմսերը՝ ետ վերադարձնելու համար: Հետևեք մեր պաշտոնական կայքին՝ տոմսերի ետ վերադարձման գործընթացի վայրի և պայմանների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ մեր ներկայացրած պայմաններին չհամաձայնելու դեպքում կարող եք դրանք բողոքարկել դատական կարգով:

FORPOSTART PRODUCTION-ի և

«Շոուսթար» ՍՊԸ-ի

տնօրեն Զ. Մխեյան